ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 1624-Ա/2 **«29» օգոստոսի 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ, ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1168 Արվեստների ծրագրի» «11005 Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման (տող՝ «Բաժանորդային համակարգի ծրագիր») տողի պահանջները՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1.) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրում ներգրավված թանգարանների, թատրոնների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն ծրագրի գործարկման ավարտ սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ:

3. Թանգարանների, թատրոնների տնօրեններին՝ սույն հրամանի 2-րդ կետում նշված

ժամանակահատվածում ապահովել պատշաճ ծրագրի իրականացումը:

4. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ Աստղիկ Մարաբյանին:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**